ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-00-70,
Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

թիվ 320-19
26 ապրիլի, 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ Ա. Ղուկասյանին

Հարգելի՝ պարոն Ղուկասյան,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 2019 թվականի N 62-Ա, N 63-Ա և N 64-Ա որոշումները:

Առդիր՝ 6 էջ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Ն. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

22 **ապրիլի 2019 թվականի, N** 62-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳԱԳԻԿ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքով», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգերով, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագիծը՝

որոշում եմ.

1. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզ Օձուն համայնք (այսուհետ նաև՝ համայնք), գ. Օձուն, 5-րդ փողոց թիվ 10/2 փոստային հասցեում ինքնակամ կառուցված, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող կառուցապատված 19.38 քառակուսի մետր մակերեսով շինությունը, ինչպես նաև զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ բնակավայրերի ընդհանուր օգտագործման 0.0029 հա մակերեսով հողամասը (այսուհետ նաև՝ անշարժ գույք) և դրանց նկատմամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության Օձուն համայնքի սեփականության իրավունքը:

2. Ինքնակամ կառույցով զբաղեցված հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությունից՝ բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման:

3. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Գործառնական նշանակությունը փոխված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Օձուն համայնք, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, թիվ 10/1:

6. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն սույն որոշման 1-ին կետում նշված կառույցն իրականացրած անձին՝ Գագիկ Էդիկի Թորոսյանին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

7. 5-օրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում՝ սույն որոշման առաջին կետում նշված շինության և ծանրաբեռնված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2019 **թ.,** **ապրիլի** 22,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

22 **ապրիլի 2019 թվականի, N** 63-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ԷԴԻԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքով», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգերով, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագիծը՝

որոշում եմ.

հիմք ընդունելով քաղաքացի Գ. Թորոսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականները, հողամասի հատակագիծը՝ ինքնակամ կառույցների համապատասխան նշումներով, շենք-շինությունների պարզաբանագիրը՝

1. Օձուն համայնքի 5-րդ փողոցի թիվ 10/2 հասցեում գտնվող, քաղաքացի Գագիկ Էդիկի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0037-0035 և 06-112-1054-0003 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.0096 հեկտար մակերեսով հողամասում 2018 թվականին՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, քաղաքացիների կյանքին և առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում չգտնվող և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, ինքնակամ կառուցված 67.86 քառակուսի մետր ատամնաբուժական կենտրոնը՝ ճանաչել օրինական:

. Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու համար հողամասի սեփականատերը՝ Գագիկ Էդիկի Թորոսյանը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի բյուջե պետք է մուծի 93700 (իննսուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ (67.86 քառ. մետր x 1380 ՀՀ դրամ = 93700 ՀՀ դրամ):

1) Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու համար սահմանված վճարը հողամասի սեփականատեր Գագիկ Էդիկի Թորոսյանը պարտավոր է մուծել 60-օրյա ժամկետում:

2) Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60-օրյա ժամկետում, չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Միավորել թիվ 29052013-06-0018 և թիվ 18052018-06-0028 սեփականության իրավունքի պետկան գրանցման վկայականները և տրամադրել միավորված անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գյուղ Օձուն, փողոց 5, թիվ 10/2 փոստային հասցեն:

4. Ինքնակամ կառույցի օրինականացումը բավարարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ սահմանված օրինականացման պայմանները, ինչպես նաև ինքնակամ կառույցը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

5. Սույն որոշմամբ սահմանված հողամասի և օրինականացվող շինության սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով: Նշված հատակագիծը (հատակագծերը) հանդիսանում են սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից չեղյալ համարել Գագիկ Թորոսյանին 2018 թվականի մայիսի 29-ի թիվ 04 և 05 շինարարության թույլտվությունները:

7. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019 թ., ապրիլի 22,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

23 **ապրիլի 2019 թվականի, N** 64-**Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0007-0006 **ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ** 0.36697 **ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,** 06-014-0308-0066 **ԾԱԾԿԱԳՐՈՎ** 0.17790 **ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ,** 06-014-0302-0048 **ԾԱԾԿԱԳՐՈՎ** 0.**11615 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ,** 06-014-0311-**0027 ԾԱԾԿԱԳՐՈՎ** 0.41985 **ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ,** 06-014-0310-**0082 ԾԱԾԿԱԳՐՈՎ** 0.80101 **ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԵՎ** 06-014-0307-0046 **ԾԱԾԿԱԳՐՈՎ** 0.05175 **ՀԵԿՏԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԳԵՆՏԻՆԱ ԲԱԳՐԱՏԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ՝

որոշում եմ.

հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, հողամասերի և բնակելի տան հատակագծերը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0007-0006 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված, փաստացի առկա սահմանազատված հողամասի և հողամասում գտնվող՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը օրինական կառուցված (կառուցվել է 1990 թվականին) և 19.07.2008 թվականի դրությամբ առկա, 340.46 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները (բնակելի տուն, բաց պատշգամբ, աստիճանահարթակ, ավտոտնակ, գոմ),

(այսուհետ նաև՝ անշարժ գույք), օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձ՝ Արգենտինա Բագրատի Շահվերդյանի՝ ծնված 10.05.1951թ. սեփականությունը:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0308-0066 ծածկագրով 0.17790 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի հողամասը, 06-014-0302-0048 ծածկագրով 0.11615 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի հողամասը, 06-014-0302-0048 ծածկագրով 0.11615 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի հողամասը, 06-014-0311-0027 ծածկագրով 0.41985 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի հողամասը, 06-014-0310-0082 ծածկագրով 0.80101 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի հողամասը և 06-014-0307-0046 ծածկագրով 0.05175 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման տնամերձ հողամասը (այսուհետ նույնպես՝ անշարժ գույք) օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձ՝ Արգենտինա Բագրատի Շահվերդյանի՝ ծնված 10.05.1951թ. սեփականությունը:

3. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0007-0006 ծածկագրով 0.36697 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և բնակելի տանը տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի, գյուղ Այգեհատ փողոց 13, թիվ 6 փոստային հասցեն և 06-014-0307-0046 ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի, գյուղ Այգեհատ, փողոց 21 թիվ 8 փոստային հասցեն:

4. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

5. Սույն որոշման առաջին և երկրորդ կետերով սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

6. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

7. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից, ուժը կորցրած ճանաչել Օձուն համայնքի ղեկավարի «22 մարտի 2019 թվականի, N 46- Ա որոշումը»:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019թ., ապրիլի 23,
«Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն